Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2024 «Տաշիր համայնքի ջրամատակարարման ենթակառուցվածքների վերականգնման և բարելավման ծրագրի» ավարտական արարողություն

Երևան՝ 11 մարտի, 2026թ.

Մարտի 11-ին Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանում տեղի ունեցավ «Տաշիր համայնքի ջրամատակարարման ենթակառուցվածքների վերականգնման և բարելավման ծրագիր» դրամաշնորհային աջակցության ծրագրի (մինչև 72,844 ԱՄՆ դոլար) ավարտական արարողությունը: Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Յուտակա Առկին, Տաշիր համայնքի ղեկավար պարոն Էդգար Արշակյանը, Տաշիր համայնքի ղեկավարի տեղակալ պարոն Նորայր Բաղդասարյանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաներ և բնակիչներ:

Ծրագրի շրջանակներում վերականգնվել և արդիականացվել է ջրամատակարարման առկա ենթակառուցվածքը (15 կմ)՝ Տաշիր համայնքի 11 գյուղերի խմելու ջրի կայուն մատակարարումն ապահովելու համար, այդպիսով բարելավելով մոտ 12,300 բնակիչների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված մոտ 700 անձանց կենսապայմանները: Համայնքում Հովդարա գետի վերին հոսանքի ջրատարները լրջորեն վնասվել էին, և դա հանգեցրել էր հոսանքից ներքև գտնվող գյուղերի ջրամատակարարման սահմանափակմանը և ջրի հաճախակի անջատումներին, որոնք տևում էին մի քանի օր: Բացի այդ, շատ բնակիչներ չունեին իրենց սեփական ջրակուտակման պայմանները, և այլընտրանք չունենալով, ստիպված խանութներից էին ջուր գնում: Հետևաբար, այս տնտեսական բեռի նվազեցումը դարձել էր հրատապ հարց:

Համայնքապետ պարոն Արշակյանը երախտագիտություն հայտնեց՝ ասելով. «Ջրամատակարարման ենթակառուցվածքների վերականգնման շնորհիվ այն գյուղերի բնակիչները, որոնք երկար ժամանակ դժվարությունների էին բախվում ջրի պակասից, այժմ ունեն կայուն խմելու ջրի հասանելիություն: Տաշիր համայնքը կապահովի վերանորոգված ջրային ենթակառուցվածքի պատշաճ պահպանում , որպեսզի Ճապոնիայի աջակցությունը հաջորդ սերունդներին նույնպես կարողանան փոխանցել»: Դեսպան Առկին նույնպես ելույթ ունեցավ՝ ասելով. «Մենք շատ ուրախ ենք, որ ջրամատակարարման ենթակառուցվածքների վերականգնումը մաքուր և մշտական խմելու ջուր կտրամադրի շատ բնակիչների՝ թեթևացնելով ջուրը անհատապես գնելու ֆինանսական բեռը: Մենք հույս ունենք, որ այս ծրագիրը կծառայի որպես հետագա քայլ Ճապոնիայի և Հայաստանի միջև բարեկամական հարաբերությունների խորացման գործում»:

Դեսպան Առկին շնորհավորական ելույթ ունեցավ

Համայնքապետ պարոն Արշակյանը երախտագիտության խոսքեր ուղղեց

Լուսանկար ծրագրի շահագրգիռ կողմերի հետ

Մշակույթի կենտրոնի սաները դեսպան Առկիին նվիրեցին իր դիմանկարը